# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

<u>ԲԴԽ-46-Ն-16</u>
**2023թ.**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ ԲԴԽ-16-Ն-6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 45-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մարտի 25-ի «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների ցանկը սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում և 3.1-ին կետում «ցանկը» բառից հետո լրացնել «և նրանց հանձնվող գործերի տոկոսաչափերը» բառերը,

2) Որոշման Հավելված 3-ի «ա» աղյուսակի 8-րդ կետի «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ» սյունակից հանել «Արթուր Աթաբեկյան» բառերը,

3) Որոշման Հավելված 3-ի «բ» աղյուսակի 2-րդ կետի «ԴԱՏԱՐԱՆ» սյունակի «քաղաքացիական» բառը փոխարինել «քրեական» բառով, իսկ «ԴԱՏԱՎՈՐ» սյունակի «Անի Մխիթարյան» բառերը փոխարինել «Արշակ Վարդանյան» բառերով,

4) Որոշման Հավելված 3-ի «բ» աղյուսակի 5-րդ կետի «ԴԱՏԱՐԱՆ» սյունակի «Վճռաբեկ դատարան» բառերը փոխարինել «Սնանկության դատարան» բառերով, իսկ «ԴԱՏԱՎՈՐ» սյունակի «Սերգեյ Չիչոյան» բառերը փոխարինել «Արթուր Աթաբեկյան» բառերով,

5) Հավելված 3-ի «դ» աղյուսակի 1-ին կետի «ԴԱՏԱՎՈՐ» սյունակի «Մամիկոն Դրմեյան» բառերը փոխարինել «Արման Թովմասյան» բառերով,

6) Որոշման 3.1-ին կետով հաստատված 4-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**2023թ. մայիսի 2**
**ք. Երևան**

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2023թ. մայիսի 2-ի թիվ
ԲԴԽ-46-Ն-16 որոշման

«Հավելված 4
Բարձրագույն դատական խորհրդի
2021 թվականի մարտի 25-ի թիվ
ԲԴԽ-16-Ն-6 որոշման

# ՑԱՆԿ
# ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՆՆՈՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՆՁՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՏՈԿՈՍԱՉԱՓԵՐԻ

| N | ԴԱՏԱՐԱՆ | ԴԱՏԱՎՈՐ | ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՏՈԿՈՍԱՉԱՓ |
|---|---|---|---|
| 1. | Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան | Մնացական Մարտիրոսյան | 5% |
| 2. | Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան | Արթուր Մկրտչյան | 75% |

»: